Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1136[2]-21.12.2016-ՏՀ-010/2

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ կետում՝

1) 16.1-րդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«16.1	Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ՝ ճարտարապետական եւ կոնստրուկտորական մասերի, ինչպես նաեւ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 40-ապատիկի չափով

2) 16-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 16.1.1.-րդ ենթակետով.

16.1.1.	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 40-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված եւ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործողության մեջ գտնվող լիցենզիաների յուրաքանչյուր ներդիրի համար տարեկան հերթական պետական տուրքը օրենքով սահմանված ժամկետներում ենթակա է վճարման մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ կետի 16.1-րդ ենթակետով սահմանված դրույքաչափով: